**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/37Շ**

ք. Երևան « 13 » « հոկտեմբերի » 2021 թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի փոխարինող Ա. Ազատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճանապարհ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Է. Բեզոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Լոռու մարզի, Ստեփանավան քաղաքի Սուրբ Վարդան փողոցի կմ 0+000-կմ 1+600 (Հ-34-ի հետ հատման կետ) հատվածի հիմնանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի (Հավելված N 2):

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն **100** տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **230 032 000 (երկու հարյուր երեսուն միլիոն երեսուներկու հազար) ՀՀ դրամ, որից 38 338 667 (երեսունութ միլիոն երեք հարյուր երեսունութ հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ճանապարհ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ՀՀ Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | «Արդշինբանկ ՓԲԸ, Էրեբունի մ/ճ |
| ՀՀ 900011025823 | ՀՀ 2472300165260010 |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՎՀՀ 03512651 |
| գլխավոր քարտուղարի փոխարինող | գլխավոր տնօրեն |
| Ա. Ազատյան | Է. Բեզոյան |
| ---------- | ---------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված թիվ 1
« 13 » « 10 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/37Շ ծածկագրով պայմանագրի

## ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
## ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

**ՀՀ Լոռու մարզի, Ստեփանավան քաղաքի Սուրբ Վարդան փողոցի կմ 0+000-կմ 1+600 (Հ-34-ի հետ հատման կետ) հատվածի հիմնանորոգման աշխատանքների**

ՀՀ դրամ

| NN | Աշխատանքի անվանումը | Չափ. միավ. | Քանակ | Միավորի արժեք | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **I Հողային աշխատանքներ** | | | | |
| 1 | Ա/բ ծածկի քանդում և բարձում էքսկ. 1.0 մ³ շ.տ. ա/ի, տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 705 | 2 300 | 1 621 500 |
| 2 | Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) էքսկ. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 1200 | 1 600 | 1 920 000 |
| 3 | Հողային պաստառի քանդում (8գIV կարգի բնահող) էքսկ. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 590 | 1 600 | 944 000 |
| 4 | Հողային պաստառի քանդում (33rIII կարգի բնահող) էքսկ. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 2290 | 1 600 | 3 664 000 |
| 5 | Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում էքսկ. 0.65մ³ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 66,3 | 6 600 | 437 580 |
| 6 | Հողային պաստառի քանդում (8գIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում էքսկ. 0.65մ³ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 9,75 | 6 600 | 64 350 |
| 7 | Հողային պաստառի քանդում (33rIII կարգի բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում էքսկ. 0.65մ³ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 44,55 | 6 600 | 294 030 |
| 8 | 10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ միջին հեռավորությամբ լիցք (հարթում, ջրում, խտացում) | մ³ | 4,4 | 400 | 1 760 |
| 9 | 8գIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ միջին հեռավորությամբ լիցք (հարթում, ջրում, խտացում) | մ³ | 19 | 400 | 7 600 |
| 10 | 33rIII կարգի բնահողի մշակում բուլդոզերով (մայթերի տեղամասում), տեղափոխում 20մ միջին հեռավորությամբ լիցք (հարթում, ջրում, խտացում) | մ³ | 29,6 | 400 | 11 840 |
| 11 | 10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ կուտակում հետագա օգտագործման համար (կողնակների լիցք) | մ³ | 95 | 300 | 28 500 |
| 12 | 8գIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ կուտակում հետագա օգտագործման համար (կողնակների լիցք) | մ³ | 416,25 | 300 | 124 875 |
| 13 | 33rIII կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ կուտակում հետագա օգտագործման համար (կողնակների լիցք) | մ³ | 88,75 | 300 | 26 625 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14 | Պահուստից IV կարգի բեկորա-խճային բնահողի բնահողի բարձում էքսկ. 1.0մ³ շ.տ. ա/ի և տեղափոխում 12 կմ լիցքի իրականացման համար (հարթում, ջրում, խտացում) | մ³ | 1653,2 | 1 800 | 2 975 760 |
| | | | | **Ընդամենը I** | **12 122 420** |
| | **II Կողնակներ և կողային առուներ** | | | | |
| 1 | Կողնակների լիցքի իրականացում բուլդոզերով (տեղափոխում 20մ միջին հեռավորությամբ) նախօրոք կուտակված բնահողով (10eIV) | մ³ | 95 | 390 | 37 050 |
| 2 | Կողնակների լիցքի իրականացում բուլդոզերով (տեղափոխում 20մ միջին հեռավորությամբ) նախօրոք կուտակված բնահողով (8դIV ) | մ³ | 416,25 | 400 | 166 500 |
| 3 | Կողնակների լիցքի իրականացում բուլդոզերով (տեղափոխում 20մ միջին հեռավորությամբ) նախօրոք կուտակված բնահողով (33rIII ) | մ³ | 88,75 | 400 | 35 500 |
| 4 | Կողնակների ամրացում ավազակոպիճով $h_{միջ.}$=4 սմ | մ² | 2400 | 450 | 1 080 000 |
| 5 | Կողային առուների իրականացում 8դ IV բնահողում 0.65 մ³ շ.տ., էքսկ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 150 | 1 560 | 234 000 |
| 6 | Կողային առուների իրականացում 8դ IV բնահողում ձեռքի աշխատանքով, բարձում 0.65 մ³ շ.տ. էքսկ. ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 7,6 | 6 600 | 50 160 |
| 7 | Կողային առուների իրականացում 33rIII բնահողում 0.65 մ³ շ.տ., էքսկ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 60 | 1 600 | 96 000 |
| 8 | Կողային առուների իրականացում 33rIII բնահողում ձեռքի աշխատանքով, բարձում 0.65 մ³ շ.տ. էքսկ. ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 2 | 6 600 | 13 200 |
| | | | | **Ընդամենը II** | **1 712 410** |
| | **III Երթևեկային մաս** | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտի տեղադրում h=10 սմ | մ² | 14925,2 | 740 | 11 044 648 |
| 2 | Խճավազային հիմք C-5 h=15 սմ<br>Խիճ 40-70մմ - 1.95 մ³<br>Խիճ 20-40մմ - 6.825 մ³<br>Խիճ 10-20մմ - 3.9 մ³<br>Խիճ 5-10մմ - 1.95 մ³<br>Խիճ (ավազ) 0-5մմ - 4.875 մ³<br>ջուր - 1.1մ³ | մ² | 11958,37 | 1 500 | 17 937 555 |
| 3 | Գործարանային արտադրության սև խիճ h=4 սմ | մ² | 11755,35 | 2 100 | 24 686 235 |
| 4 | Խոշորահատիկ ա/բ h=6սմ | մ² | 11755,35 | 5 000 | 58 776 750 |
| 5 | Մանրահատիկ ա/բ h=4սմ (խիտ Б տիպի I մակնիշի) | մ² | 11755,35 | 4 100 | 48 196 935 |
| 6 | Արհեստական անհարթություն (մանրահատիկ ա/բ) $h_{max}$=7սմ | մ² | 43,12 | 7 000 | 301 840 |
| | | | | **Ընդամենը III** | **160 943 963** |
| | **IV Իջատեղեր և մուտքեր** | | | | |
| 1 | Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) բուլդոզերով տեղափոխում մինչև 10մ, բարձում էքս. 0.65մ³ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 4կմ | մ³ | 620 | 2 190 | 1 357 800 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով, բարձում էքս. 0.65մ$^3$ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 4կմ | մ$^3$ | 28,75 | 6 300 | 181 125 |
| 3 | Հողային պաստառի քանդում (III կարգի բնահող) էքս. 0.65մ$^3$ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4կմ | մ$^3$ | 144,5 | 2 190 | 316 455 |
| 4 | Պահուստից IV կարգի բնահողի բարձում էքսկ. 1.0մ$^3$ շ.տ. ա/ի և տեղափոխում 12կմ միջին հեռավորությամբ լիցք (հարթում, ջրում, խտացում) | մ$^3$ | 144,5 | 2 500 | 361 250 |
| 5 | Հողային պաստառի հարթեցում բուլդոզերով | մ$^2$ | 1123,47 | 400 | 449 388 |
| 6 | Ավազակոպճային շերտի տեղադրում h=10 սմ | մ$^2$ | 1634,1 | 740 | 1 209 234 |
| 7 | Խճային հիմքի տեղադրում h=12 սմ բիտումի 4.12տ/1000մ$^2$ տարածումով | մ$^2$ | 67,37 | 2 300 | 154 951 |
| 8 | Խճավազային հիմք C-5 h=15 սմ<br>Խիճ 40-70մմ - 1.95 մ$^3$<br>Խիճ 20-40մմ - 6.825 մ$^3$<br>Խիճ 10-20մմ - 3.9 մ$^3$<br>Խիճ 5-10մմ - 1.95 մ$^3$<br>Խիճ (ավազ) 0-5մմ - 4.875 մ$^3$<br>ջուր - 1.1մ$^3$ | մ$^2$ | 1634,1 | 1 500 | 2 451 150 |
| | Գործարանային արտադրության սև խիճ h=4 սմ | մ$^2$ | 1634,1 | 2 100 | 3 431 610 |
| 9 | Խաշորահատիկ ա/բ h=6 սմ | մ$^2$ | 1634,1 | 5 000 | 8 170 500 |
| 10 | Մանրահատիկ ա/բ h=4 սմ (խիտ Б տիպի I մակնիշի) | մ$^2$ | 1634,1 | 4 100 | 6 699 810 |
| 11 | Մանրահատիկ ա/բ h=5 սմ (խիտ Б տիպի I մակնիշի) | մ$^2$ | 67,37 | 4 700 | 316 639 |
| | | | | **Ընդամենը IV** | **25 099 912** |
| | **V Մայթեր** | | | | |
| 1 | Բետոնյա եզրաքարերի քանդում էքս. 0.65մ3 շ.տ. , բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4կմ | մ$^3$ | 0,31 | 1 000 | 310 |
| 2 | Բազալտե 15x30 եզրաքարերի և եզրաշարի քանդում և վերատեղադրում բետոնյա հիմքի վրա 1գծ.մ - 0.035մ$^3$ (B-15) | գծ.մ | 1726,3 | 2 500 | 4 315 750 |
| 3 | Նոր բազալտե 15x30 եզրաքարերի տեղադրում բետոնյա հիմքի վրա 1գծ.մ - 0.035մ$^3$ (B-15) | գծ.մ | 242,1 | 11 720 | 2 837 412 |
| 4 | Միաձույլ բետոնե եզրաշարի կառուցում 10x20 (B-20) | մ$^3$ | 4,12 | 62 500 | 257 500 |
| 5 | Ավազակոպճային հիմքի իրականացում h=12սմ | մ$^2$ | 1799,5 | 740 | 1 331 630 |
| 6 | Ավազային ա/բ h=3սմ | մ$^2$ | 1799,5 | 3 800 | 6 838 100 |
| 7 | Ջրահեռացման մետ. d=102մմ/4մմ խողովակների տեղադրում (հիդրոմեկուսացումով) մայթի տակ, 20 հատ | գծ.մ | 40,0 | 20 000 | 800 000 |
| | **Հետիոտնային թեք հարթակներ** | | | | |
| 8 | Ավազակոպճային հիմքի տեղադրում $h_{միջ}$=10սմ | մ$^2$ | 19,6 | 700 | 13 720 |
| 9 | Միաձույլ բետոնե հիմք h=5սմ B-15 | մ$^3$ | 0,98 | 50 000 | 49 000 |
| 10 | Չոր ավազացեմենտային խառնուրդ h=3սմ (70% ավազ, 30% ցեմենտ) | մ$^2$ | 19,6 | 2 340 | 45 864 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Բազալտե եզրաքար 10x20սմ տեղադրում (միաձույլ բետ. հիմքի վրա 1 գծմ - 0.03մ³ B-15) | մ | 58,1 | 9 000 | 522 900 |
| 12 | Բազալտե սալիկների 300x50մմ տեղադրում | մ² | 19,6 | 15 000 | 294 000 |
| | | | | **Ընդամենը V** | **17 306 186** |
| | **VI Ջրահեռացման վաքեր (30x34սմ, 50x60սմ) և խողովակներ** | | | | |
| | Վաքեր 30x34սմ | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ h=10սմ (30x34սմ վաքերի տակ) | մ³ | 1,8 | 7 000 | 12 600 |
| 2 | 30x34սմ վաքերի ջրամեկուսացում | մ² | 45,36 | 1 300 | 58 968 |
| 3 | 30x34սմ վաքերի տեղադրում | մ³ | 2,88 | 170 000 | 489 600 |
| | Վաքեր 50x60սմ | | | | |
| 4 | Ավազակոպճային շերտ h=10սմ (50x60սմ վաքերի տակ) | մ³ | 8,4 | 7 000 | 58 800 |
| 5 | 50x60սմ վաքերի ջրամեկուսացում | մ² | 147 | 1 300 | 191 100 |
| 6 | 50x60սմ վաքերի տեղադրում (սալերով - 285 հատ) | մ³ | 15,225 | 190 000 | 2 892 750 |
| | Մետաղական խողովակ | | | | |
| 7 | Հանույթի իրականացում խողովակի տեղադրման տեղամասում ձեռքի աշխատանքով, կողքի կուտակումով | մ³ | 0,6 | 4 700 | 2 820 |
| 8 | Ավազակոպճային շերտի տեղադրում $h_{միջ}$=10սմ (խողովակի տակ) | մ³ | 0,1 | 7 000 | 700 |
| 9 | Մետաղական d=325մմ խողովակի տեղադրում | գծմ | 3 | 53 900 | 161 700 |
| 10 | Քսվածքային ջրամեկուսացում | գծմ | 3 | 2 500 | 7 500 |
| 11 | Հետլիցքի իրականացում ձեռքով | մ³ | 0,3 | 4 000 | 1 200 |
| | | | | **Ընդամենը VI** | **3 877 738** |
| | **VII Ջրընդունիչներ (ընդհանուր L=35 մ)** | | | | |
| 1 | IV կարգի բնահողի քանդում ձեռքի աշխատանքով, խրամուղու կառուցում կողքի կուտակումով | մ³ | 8,75 | 5 500 | 48 125 |
| 2 | Ավազակոպճային շերտ h=10սմ | մ³ | 3,29 | 7 000 | 23 030 |
| 3 | Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք<br>բետոն B-20<br>ամրան & 14մմ A500c - 289.8գծմ/350.08կգ | մ³ | 12,18 | 200 000 | 2 436 000 |
| 4 | Քսվածքային ջրամեկուսացում | մ² | 42,0 | 1 200 | 50 400 |
| 5 | Ցանցի իրականացում<br>ամրան & 25մմ A500c - 201.6 գծմ/776.76կգ<br>Անկյունակ L 100x10մմ - 70 գծմ/1057 կգ<br>Անկյունակ L 90x9մմ - 106.4 գծմ/1298.08կգ | տ | 3,13184 | 1 050 000 | 3 288 432 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Հետլիցք ձեռքով | մ³ | 5,60 | 5 500 | 30 800 |
| 7 | Ավելացված բնահողի բարձում ձեռքով և տեղափոխում լցակույտ 4 կմ | մ³ | 3,15 | 6 700 | 21 105 |
| | | | | **Ընդամենը VII** | **5 897 892** |
| | **VIII Դիտահորեր** | | | | |
| 1 | Դիտահորերի ոչ պիտանի բետոնյա սալերի ապամոնտաժում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6.0 կմ միջին հեռ. (գոյություն ունեցող կափարիչների վերադարձ սեփականատիրոջը) | հատ | 4 | 6 500 | 26 000 |
| 2 | Դիտահորի նոր սալերի (կափարիչով) տեղադրում (1,2x1,2) | հատ | 4 | 106 000 | 424 000 |
| | | | | **Ընդամենը VIII** | **450 000** |
| | **IX Կահավորում** | | | | |
| 1 | Նոր ազդանշանային C1 տիպի պլաստիկ սյուների տեղադրում | հատ | 32 | 4 700 | 150 400 |
| 2 | Ճանապարհային նշանների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը | հատ | 5 | 1 659 | 8 295 |
| 3 | Նոր ճան. նշանների տեղադրում | հատ | 57 | 25 800 | 1 470 600 |
| 4 | Ճանապարհի գծանշում ( լուսաանդրադարձիչ ներկով) | մ² | 413,41 | 2 400 | 992 184 |
| | | | | **Ընդամենը IX** | **2 621 479** |
| | | | | **Ընդհանուրը** | **230 032 000** |

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

** Կապալառուն աշխատանքները կատարում է

**Չափաբաժին 1՝ ՀՀ Լոռու մարզի, Ստեփանավան քաղաքի Սուրբ Վարդան փողոցի կմ 0+000-կմ 1+600 (Հ-34-ի հետ հատման կետ) հատվածում**:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարի տեղակալ
Ա. Սողոմոնյան

/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ճանապարհ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ
«Արդշինբանկ ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
ՀՀ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651
գլխավոր տնօրեն
Է. Բեզոյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 2
« 13 » « 10 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/37Շ ծածկագրով պայմանագրի

## ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
## ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**ՀՀ Լոռու մարզի, Ստեփանավան քաղաքի Սուրբ Վարդան փողոցի կմ 0+000-կմ 1+600 (Հ-34-ի հետ հատման կետ) հատվածի հիմնանորոգման աշխատանքների**

| No | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 0 | Լաբորատոր փորձարկումներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո |
| 1 | Հողային աշխատանքներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 40 օր հետո |
| 2 | Ջրահեռացման տարրերի իրականացում | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 55 օր հետո |
| 3 | Երթևեկելի մաս | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 85 օր հետո |
| 4 | Իջատեղերի նորոգում | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո |
| 5 | Կողնակների իրականացում | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 85 օր հետո |
| 6 | Մայթեր | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 85 օր հետո |
| 7 | Անվտանգության էլեմենտներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո |

| | | |
|---|---|---|
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | **Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո** | **Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա դեկտեմբերի 10-ը** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարի փոխարինող
Ա. Ազատյան

---
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ճանապարհ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ
«Արդշինբանկ ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
ՀՀ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651
գլխավոր տնօրեն
Է. Բեզոյան

---
/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

*Հավելված N 3*
*« 13 » « 10 » 2021 թ. կնքված*
*ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/37Շ ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231177/589 | ճանապարհների վերանորոգման աշխատանքներ | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարի տեղակալ
Ա. Եղնազարյան

---
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ճանապարհ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ
«Արդշինբանկ ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
ՀՀ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651
գլխավոր տնօրեն
Է. Բեզոյան

---
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« 13 » « 10 » 2021 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/37Շ ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*« 13 » « 10 » 2021 թ. կնքված*
*ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/37Շ ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն